ՍԽԱԼ. Լուրջ սննդականոն մը կրնայ դարձանել քոլեսթերոլը: Սննդականոնը ձախողած կարելի է նկատել, եթէ 3 ամիս ետք արեւում չարձանագրուի: Այդ պարագային եւ բժիշկին հաւանութեամբ կարելի է դիմել դեղահատերուն՝ սննդականոնը չդարբեցնելու պայմանով:

Պատրաստեց ՇՈՒՇԻԿ ՄԱՄԱԳԱԼԵԱՆ

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE



AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide:

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍԱՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՆՆԵՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԷՏԻ ԸԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ՇԵՆ. (02) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... ... OR WHERE YOU NEED.

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակաքանքները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,35 - 32,45 լ.ն.
Իրաքեան տինար	4845,00 - 4855,00 լ.ն.
Քուէթեան տինար	5013,00 - 5038,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3986,00 - 4011,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիսաւ	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ուիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէյուտական ուիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ուիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	2457,00 - 2467,00 լ.ն.
Անգլիական սթերլին	1108,00 - 1113,00 լ.ն.
Զուիցերիական ֆրանք	105,75 - 106,25 լ.ն.
Թրքական լիրա	2900,00 - 2925,00 լ.ն.
Կիպրական փաունտ	12,65 - 12,75 լ.ն.
Ճապոնական հապար եէն	12,80 - 12,90 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	1501,00 - 1515,00 լ.ն.
Ամերիկեան տոլար	1102,00 - 1107,00 լ.ն.
Քանադական տոլար	992,00 - 997,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1710,00 - 1720,00 լ.ն.
Եւրօ	

● **ՈՍԿԻ**

Անգլիական մէկ ոսկի	134,500 - 139,500 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	120,000 - 125,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	110,500 - 115,500 լ.ն.
Մէքսիքական փէսոս	638,000 - 658,000 լ.ն.

Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 16,620,000 - 16,820,000 լ.ն.

Մէկ օսն ոսկի 345,00 - 345,50 \$

Մէկ օսն արծաթ 4,75 - 4,77 \$

● **Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.**

Եւրօ	1.1346 - 1.1353
Քանադական տոլար	1.3636 - 1.3646
Զուիցերիական ֆրանք	1.3594 - 1.3604
Ճապոնական եէն	118.08 - 118.18
Մէկ սթերլին	1.6309 - 1.6319

Մէկ փոլար 560 դրամ

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՄՆԵԹՈՒՂԹԵՐ**

Գիւնի Ա. 62 դրամ	Գիւնի Բ. 62 դրամ
Ա. կարգ 5.08	4.92
Բ. կարգ 5	5

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՇԵՆ. 01-252852

ԱՅՍՈՐ

«Պէյրուսի փառատուն. «Մեր Թերեզա է լէ գ'անֆան տի Մոնտ», պալէի ներկայացում, «Մօրիս Պեժար» պալէի խումբին կողմէ, ժամը 20:30ին, Պէյրուսի փառատուն:

- Նուագահանդէս. Ելոյթ կ'ունենայ Ջիատ Սահապ (ուտ), ժամը 20:00ին, «Մեթիսէ» բառերաբան:

- Արկածախնդրական խաղերու փառատուն՝ «Էքսքրիմ Էսօլեմ-Էր փարթ», ՊիԷԼի մէջ, մինչեւ Օգոստոսի վերջը:

- Թուրքիկի Միջազգային 4րդ փառատուն. մինչեւ 14 Յուլիս, «Լը Բոմոտոր Մերիտիէ» պանդոկ:

- Ձեռնդման արուեստի գործերու ցուցահանդէս՝ Նատա Արհ-Նաուիի «Աքազաքար», Յրաքարի տը մեմուարը, մինչեւ 31 Յուլիս, Նահապուկազ հրապարակ:

- Լուսակարգական ցուցահանդէս՝ «Թէն Վիոլ», «Էսփաս Էս. Տէ.» ցուցարան, մինչեւ 10 Յուլիս:

- Միքսիքական մշակութային շաբաթ, ԵՈՒՆԵՍԿՕ, մինչեւ 19 Յուլիս:

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)

Եթէ պայմանագրուելին մը պիտի ստորագրէք, պայմանագրում մը առաջարկեցէք այդ մասին մտածելու համար: Այսօր ոչ մէկ գործ հապնեպով ըրէք, այլ հանդարտ:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Ձեզ պիտի գովեն այսօր, պիտի շնորհաւորեն, որպէսզի աւելի լաւ աշխատիք: Մնացէք ձեր սկզբունքներուն վրայ, համեստ ու աշխատասէր:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Ամուսնական ձեր կեանքին կամ բարեկամական յարաբերութեան մէջ պիտի ըլլան յարձակումներ: Զայեցէք ձեր ջիղերը: Հանդարտութիւնը կեանք է:

ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Աշխատանքի մէջ դասաւորուած չէք, հարցերը իրարու կը խառնէք, խանգարում կը ստեղծէք: Ձեր այս վերաբերումը պիտի նկատուի ձեր շուրջիներէն:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Եթէ չէք ուզեր, որ ձեր գաւակները անհանդուրժելի ըլլան, ամէն ինչ ըրէք, որպէսզի անոնք չձանձորանան: Օրը կը պահանջէ համբերութիւն: Մնացէք հանդարտ:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Այսօր դժկամութիւն եւ ձախաւերութիւն պիտի ցուցաբերէք ձեր չորս կողմը գտնուողներուն: Ձեր բարեկամները պիտի փախչին ձեզմէ: Հանդարտութիւնը կը խոչընդոտէ:

ԿՇԻՈՒՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Եթէ նոյնիսկ անտարամադիր էք եւ սիրտ չունիք գործ մը ընելու, այսուհանդերձ ժամանակ տրամադրեցէք ձեր եղբոր կամ բոլոր յուսահատութիւնը փարատելու եւ անոր կողմը բարձրացնելու:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Ամէն ինչ կ'ատէք, դուք ձեզ կը գրկէք կարգ մը հանելի հանդիպումներէ եւ այս ձեռով առիթ կու տար ամէն տեսակի փորձութիւններ ստեղծելու: Այս ձեռը վտանգաւոր է ձեր վիճակին համար:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Ձեր նախաձեռնութիւնը արժանի էր իրական եւ անկեղծ յաջողութեան, բայց ձեզի ցոյց տուին պաղ վերաբերում: Մի յուսահատիք, օր մը կ'ունենաք ձեզի արժանի յաջողութիւնը:

ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Որք ձեզ շատ յոգեմեծ կը զգայ, այն աստիճան, որ պիտի մտաբերէ ձեզ: Հանգստացէք, մնացէք հանդարտ ու խաղաղ անկեղծ մը մէջ: Օրը համբերութիւն կը պահանջէ:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Ձեր բարեկամները ձեզ պիտի լքեն, իսկ դուք այնքան հպարտ էք, որ գանձք պիտի չկանչէք ձեր բով: Օրը յարմար չէ նոր աշխատանքի սկսելու: Մնացէք հանդարտ:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Ամուսնաց ամէնէն անգամ օրն է աշխատանքի տեսակետէն: Ուրեմն հոս ու հոն մի՛ ցրուէք ձեր ուժը, այլ մնացէք կեդրոնացած, խաղաղ: Վաղը կրնաք մտածել ձեր ընկերներուն մասին:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԷՄ / ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԱՐՈՒԵՏՍԱԳԷՏ ԶԻԱՏ ՍԱՀԱՊ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ ՊԻՏԻ ԿԱՄՐՁԷ ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՍԱԿԱՆ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ



Չիատ Սահապ

Ուտ նուագող, յորինող եւ երգիչ Չիատ Սահապ իր համակիրներուն կը ներկայանայ Լիբանանի տարածքին թէ արաբական երկիրներու մէջ յաճախակիորէն կապակերպով նուագահանդէսներով, որոնց ընթացքին արուեստագէտին կ'ընկերակցի անոր «Շահապին էս պալատն» երգչախումբն ու նուագախումբը:

Մարաքական դասական երաժշտութեան եւ երիտասարդութեան միջեւ կապը հանդիսացող այս շատ երիտասարդ արուեստագէտը այլ ելոյթով մը հանդէս պիտի գայ այսօր, երէկոյեան ժամը 8:00ին, «Մեթիսէ» բառերաբանի մէջ: Անոր այս ելոյթին յայտագիրը կ'ընդգրկէ մեծ ժողովրդականութիւն վայելող արաբ երգիչներու, ինչպէս Ֆուատ Ապտէլ Մակիտ ալ Միսրաբուիի, Ապտէլ Ուահապի երգերէն, ինչպէս նաեւ՝

իր երաժշտական յորինումներէն եւ պատշաճեցումներէն:

Եօթը տարեկանէն ի վեր ուտ նուագող Չիատ Սահապ իր «Շահապին էս պալատն» խումբին հետ շրջած է Լիբանանի տարածքին՝ ունենալով մասնակցելով լիբանանեան աւելի ժողովրդային բնոյթի փառատօներու: Ան ծանօթ է նաեւ ոչ լիբանանցի հանդիսատեսին, տրուած ըլլալով, որ ելոյթ ունեցած է ֆրանսական եւ թունուկեան փառատօներու ընթացքին:

Չիատ Սահապ նաեւ փորձեր կատարած է քաղաքական արուեստի

մէջ: Անցնող ամիսներուն ան մասնակցեցաւ ժան Փոլ Սարրիի «Աղտոտ ձեռքեր» քաղաքապետի լիբանանեան ներկայացման՝ բեմադրութեամբ Ուալիտ Ճախրէտտինի: Ան միաժամանակ կատարած է այդ քաղաքապետի երաժշտական յորինումը:

ՕԴԵՐԵՒՈՅԹ




ՀԻՆԳՇԱԲԹԻ, 10 ՅՈՒՆԻՍ 2003

ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ԾԵՐԵԿ՝ 29°C

ԳԻՇԵՐ՝ 22°C

ԽՈՒԱՌՈՒԹԻՒՆ՝ 78%



«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ. ՄԻՆՁԵՒ ԵՐԵՎԱՆԻՆ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՋԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարատրութիւն կայ:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5483

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՒՆՈՒՄԱԿԱՆ

1. Բաֆֆիի երկերէն - Օգի խառնակութիւն:

2. Խելք - Թակարդէ:

3. Կտակուած ժառանգութիւն - Ալլուրեանէն:

4. Մեռելահարցուկ:

5. Պատուաւ - Մորթիանի բիծ (Հակ.):

6. Փորձանք, պատահար:

7. Արեւելեան տրոգոս - Մանչուկ - Նաեւ:

8. Պարագայ կամ պաշտօն:

9. Ժխտական մասնիկ - Էական բայ - Կուպր:

10. Ոսկեղոյն - Հիւսիսային Ամերիկայի լիճերէն:

ՈՒՂԱՆՈՒՄ

1. Մփանք - Եղանակաւորիչ մակրայ:

2. Մեղմ հով - Ձիւրք, քանթար:

3. Մոցոլոր - Դաշտափայլ:

4. Միսի որդ - Շնորհք, վայելչութիւն:

5. Որսահետք - Աղը պակաս:

6. Կեղծ մազ:

7. Զամբիկ, մատակձի:

8. Վարժութիւն - Յիշատակէ:

9. Մնենի (Հակ.) - Քաղցրածայն վայրի թուղուն:

10. Լեզուով մը՝ այդ՝ - Վարսել - Ալլուրեանէն:

ԹԻՒ 5482

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
4	Ո	Ի	Դ	Ա	Կ	Մ	Ա	Ճ	
2	Ա	Ի	Ն	Գ	Պ	Ա	Զ		
3	Ն	Ա	Դ	Ի	Ր	Ն	Ա	Թ	
4	Թ	Ե	Ե	Ն	Զ	Ա	Ր	Ի	
5	Մ	Ե	Ր	Գ	Ա	Ի	Ո	Ր	
6	Ա	Ղ	Ր	Ա	Ք	Ա	Ն	Ա	
7	Ա	Կ	Ա	Ր	Գ	Ն	Ա		
8	Պ	Տ	Մ	Ա	Ր	Գ	Ի	Ր	
9	Ա	Լ	Զ	Ա	Յ	Ր	Ի		
10	Տ	Ի	Տ	Ա	Ն	Ե	Լ	Ա	Ա

ԱՉԳԱԿ 50 ՏՆՄԻ ԱՌԱՋ 10 ՅՈՒՆԻՍ 1953

ԱՅՅԱԿԱՆ ԶԱՐԴԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԶԱՅԱՑՈՒՄՆ ՎԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԻԹԹԻՀԱՍԸ ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԶԱՐԴԵՐԸ

«Ռեսուրսի Թարիս» ճանդէսը իր վերջին թիւին մէջ արձագանգ կ'ըլլայ Սալահաթին Կիւնկէօրի այն յօդուածին, զոր կատարած է Իթիսահաթի ընդհանուր բարոտուղը Միտհաթ Շիւքրիի հետ: Այս առթիւ բարոտուղը իր գործունէութեան մասին տուած տեղեկութիւններու կարգին կ'անդրադարձայ նաեւ հայկական հարցին, զոր կու տանք ստորեւ:

Մեծայարգ Միտհաթ Շիւքրիի հարցուցի:

- Հապա սա հայերուն տարագրութեան հարցը:

Պայծառ դէմքը, որ այս տարիքին յայտնի կ'ընէր, թէ բոլորին մասին միայն լաւ բաներ կը խորհի, դառն ժպիտով մը ծամածոցեցաւ:

- Թէեւ, ըսաւ, շատ քիչեր պիտի հաւատան խօսքերուս, սակայն այստեղ պիտի չկարենամ ետ կենալ պատմական ճշմարտութիւն մը կրկնել: Հայերուն կարանցներով արտուումին եւ սպանութեան խնդրոյն մէջ անհար եւ անհատապէս պատասխանատու նկատելի Իթիսահաթի թերաքրի ընդհանուր կեդրոնը, որովհետեւ հայոց տարագրութեան մասին մեր կեդրոնէն այս կամ այն բնոյթով գաղտնի եւ բացորոշ ոչ մէկ հրաման տրուած է: Հանգուցեալ թալեք օրաշարժի յայտարարութեան օրերուն բոլոր կուսակալներուն հրահանգ էր զրկած իրաւափիլ ամեն կարգի բարոտութիւններէ, որոնք կրնային մեզ պատերազմի մտցնել ուսերուն հետ: Այս հրահանգէն ետք, իրեն կուսակցութեան ընդհանուր բարոտուղը, Երզրումի Թեշքիաթը Մահապա շէյխի ղեկավար Պահաթտին Շաքիրի ծածկակիր հետագիր մը բաշտելով մեր արեւելեան նահանգաց հայերուն կ'արձագանգէ մասին վերի վերոյ սա հրահանգը տուի:

«Յայտնի եղած է, որ հայերը տրամադիր չեն մեզի հետ հաւաքաբար գործելու: Հետեւաբար հարկ է անոնցմէ ծածկել մեր ձեռք առած միջոցները: Բայց եւ այնպէս կառավարութեան եւ կուսակցութեան համար յոյժ կարեւոր ըլլալուն՝ ապահովել մեր հայ հայրենակիցներուն բարոտութիւնն ու երջանկութիւնը, ձեր արժանաւորութեանը անկ է այս մասին անհրաժեշտ երաշխիքները ընծայել ու գոհացում տալ սիրտերուն»:

Ընդհանուր կեդրոնին այս վերահասու ու արդարութեան սկզբունքներուն հաշտ գործընկերակիցի անչեւ




(Մնացեալը վաղը)

ԱՅՍՈՐ՝ 10 ՅՈՒՆԻՍԻՆ

1921- Պոլշեկից կը գրանէ Լեռնահայաստանը: Լեռնահայաստանի նօդեան կառավարութիւնը կ'անցնի Պարսկաստան:

1988- Սահ՝ Հրայր Խալաթեանի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՄՈՆ ԼԱ ՍԱԼԻ ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

Հ.Մ.Ը.Մ. ՊԵՅՐՈՒԹ ԽԼԵՅ ՄՐՅԱՇԱՐՔԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ԲԱԺԱԿՆԵՐԸ

Մոն Լա Սալի մէջ երէկ սկսաւ Լիբանանի փինկ փոնկի ամառնային մրցաշարքը, որ կը նկատուի կարեւոր մրցաշարք մը, որովհետեւ ըլլալով, որ անիկա կ'ետեւունք իր իրաւունքները:

Մրցաշարքին առաջին օրը տեղի ունեցան 86-87ի եւ 92ի ծնունդ դասակարգերու մրցումները: Նշենք, որ այսօր ժամը 5:30էն սկսեալ տեղի կ'ունենան 88-89ի եւ 90-91ի դասակարգերու մրցումները (տղաք եւ աղջիկներ):

Մրցաշարքի առաջին օրուան երկու բաժակներուն տիրացաւ Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ, շնորհիւ Աւո Մունջոյի (82ի ծնունդ) եւ Մալէք Թաուիի (86-87ի ծնունդ): Ստորեւ՝ երէկուան արդիւնքները:

- 92ի ԾՆՈՒՆԴ**
- Աւո Մունջոյի - Մոհամէտ Ժըմաա 3-0
- Աւո Մունջոյի - Վարանդ Պոյաճեան (Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի) 3-0
- Աւո Մունջոյի - Հրակ Պետոյեան (Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի) 3-0 (աւարտական)
- Վարանդ Պոյաճեան - Նիզար Առուտ 3-1
- Հրակ Պետոյեան - Ռոյ Աբիբի 3-0
- Հրակ Պետոյեան - Արմէն Պաքաճեան (Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի) 3-2
- Արմէն Պաքաճեան - Գէորգ Բէօֆթեան (Անդրա-նիկ) 3-1


- 86-87ի ԾՆՈՒՆԴ**
- Սերուժ Չամիչեան (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս) - Հէրի Զաաթարի 3-0
- Սերուժ Չամիչեան - Սէմի Ապտէլ իսալէք 3-0
- Սերուժ Չամիչեան - Անթոնի Զաարուր 2-3
- Հրայր Պօղոսեան (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս) - Մոհամէտ Պաննուժ 0-2
- Ժալալ Թաուիլ (Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ) - Ապտո իսալի 3-0
- Ժալալ Թաուիլ - Ռոյ Աբիբի 3-0
- Ժալալ Թաուիլ - Ճօ Քատտուժ 3-0
- Ժալալ Թաուիլ - Մոհամէտ Պաննուժ 3-2
- Մալէք Թաուիլ (Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ) - Ժալալ Սամէր 2-0
- Մալէք Թաուիլ - Նազէր Պապաճի 3-0
- Մալէք Թաուիլ - Անթուան Պոլթրոս 3-0
- Մալէք Թաուիլ - Քրիսթիան Թաուէզ 3-0
- Մալէք Թաուիլ - Ժալալ Թաուիլ 3-2 (աւարտական)

ՆԱՆԹ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ Է ԱԼՊԵՐ ՍԱՐԳՍԵԱՆՈՎ

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի միջազգային մարզիկ Ալպէր Սարգսեան, որ մաս կը կազմէ Բիւնուէ Արսենալ ակումբին, շարափասկիբոլի մեկնեցաւ Ֆրանսա, նկատի ունենալով, որ Նանթ շատ հաւանաբար իր կազմին միացնէ հայրենի մարզիկը:

Հայրենի մարզիկին Նանթ փոխանցման մանրամասնութիւնները հաւանաբար յստականան յառաջիկայ շաբաթ, երբ ան փորձեր պիտի կատարէ Ֆրանսական ակումբին հետ:

ՈՒՍԱԿ ԻՐ ԿԱԶՄԻՆ ՄԻԱՑՈՒՑ ԱՐԺԱՆԹԻՆՑԻ ՄԻԼԻՅՈՆ



Ռէալ Մատրիտի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ շատ հաւանաբար շուտով իրենց կազմին միացնեն արժանի ինքնիմաստէ միջազգային մարզիկ Կապրիել Միլիթոն (իսպանացի) տիենթէն, որ պիտի փոխարինէ Ֆեռնանտո Լիեքտոն փոխարինողը:

Ըստ սպանական մամուլին, երկու ակումբներուն միջեւ արդէն իսկ չորս տարուան համաձայնագիր մը ստորագրուած է, թէ եւ 22 տարեկան յետսպանացի փոխանցման գումարին մասին ցարդ ոչինչ կը յայտարարուի:

Ռէալ Մատրիտի նախագահ Ֆլորենթինօ Փերէս իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ խումբը որոշած է հետեւ մնալ պրագիլի Ռոնալտինիոյ համար մղուող պայքարին, այսպիսով աւելի տալով Մանչեսթըր Եւնայթեօնի եւ Պարսելոնայի շարունակելու պայքարը:

Մայրաքաղաքի կազմը յայտարարեց նաեւ, թէ Նախնալ Տր Մատրիտի մարզիկ խոսէ Փեյլորո նշանակուեցաւ ակումբի նոր մարզիկ Բարլոս Քուէյրոսի գլխաւոր օգնականը, իսկ Ուոլթեր Տի Սալվօ Կրոսերներու խումբին մարզիկ:

43 տարեկան Փեյլորո նախապէս աշխատակցած է Քուէյրոսի հետ, երբ անոնք երկուքը տարբեր պաշտօններ ստանձնած էին, Փորթուկալի ֆուտբոլի ազգային խումբին անձնակազմին ներս:

Կապրիել Միլիթո

ՌԻՔԱՐՏ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԶՕՐԱՅՆԵԼ ՊԱՐՄԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆԸ

Պարսելոնայի նոր մարզիկ հոբանտացի Ֆրանք Ռիքարտ երէկ իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ մեծ աշխատանք պիտի տանի, խումբին պաշտպանողականը ամէն գնով զօրացընելու համար:

40 տարեկան Ռիքարտ, որ փոխարինեց սերբիացի Ռատոմիր Անթիլը, ըսաւ. «Խումբը իր կազմին ներս ունի շատ լաւ մարզիկներ, սակայն վերջին տարիներուն անիկա իր բերդէն ներս կը ստանայ մեծ թիւով կոյր: Պիտի զօրացընենք խումբին պաշտպանողականը, թէ եւ միտաժամանակ միշտ յարձակողական ֆուտբոլի հրահանգներով մեր համակիրներուն»:

Այդ ուղղութեամբ աշխատելով, Պարսելոնա իր կազմին միացուց Մոնթեռոյի մեքսիկացի միջազգային յետսպանացի Ռաֆայէլ Պարթէզը, որ երէկ «Նու



Մարթէզ (ձախից) եւ Լափորթա

Բամփի» մէջ պաշտօնապէս ներկայացուեցաւ թղթակիցներուն, ակումբին նախագահ Նուան Լափորթայի կողմէ: Ան չորս տարուան պայմանագրով թիւն մը ստորագրեց Պարսելոնայի հետ:


Պարսելոնա ներկայիս հետաքրքրուած է նաեւ

բազմաթիւ այլ մարզիկներով, որոնց շարքին ձիւրի Սիւսէ (Օքսէն), Ռոյ Մաքայ (Տեփորթիլո Բորուս), Ռոպերթօ Ալալա (Վալենսիա), Ժան-Ալէն Պոլմոնի (Օքսէն), Փապալօ Ալմար (Վալենսիա) եւ անշուշտ՝ Ռոնալտինիոն (Փարիզ Սէն Ժերմէն):

ՅՐԱՆՍԱՅԻ ՀԵԾԵԼԱՐՇԱԻԻ ԾՐԱՎԱԶՔ

ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՄՐԻ ՓԵՆԱՅԻ ԵՒ ԱՐՄՍԹՐՈՆԿԻ ՄԻՉԵՒ

Ֆրանսայի հեծելարշաւի շրջակայքին 4րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ ժուանվիլէն Սէն Տիպիէ (69 քմ.) եղաւ իմբային՝ ժամացոյցի դէմ մրցումը: Անիկա վերջ գտաւ ի նպաստ ամերիկեան Եու. Էս. Փոսթալ խումբին որ արձանագրեց 1 ժամ 18 վայրկեան, 27 երկվայրկեան արդիւնք մը:



Փեցա

Չորս անգամ այս տիտղոսին տիրացած ամերիկացի Էնս Արմսթրոնկ եղաւ մե-

ման մէջ բարձրագույն 2րդ դիրք, միայն մէկ

գրաւող իր իմբակիցէն՝ քուսիպիցի Վիքթոր Հիլիօ Փենայէն, որ այսպիսով յաջողեցաւ դեղին շապիկը խլել ֆրանսացի ժան-Փաթրիք Նալոնէն (Տըլաթոր): Նշենք, որ Փենայէն այսպիսով կը դառնայ առաջին քուսիպիցի, որ կը հագնի դեղին շապիկը:



Եու. Էս. Փոսթալ խումբը

ծագոյն օգտուողը այս հանգրուանին, երբ ընդհանուր դասարան-

երկվայրկեան տարբերութեամբ ետ մնալով պարագլուխի դիրքը

Ընդհանուր դասարան առաջին ութ դիրքերը գրաւող մարզիկները բոլորն ալ մաս կը կապեն Եու. Էս. Փոսթալ խումբին: Այսօր տեղի կ'ունենայ 5րդ հանգրուանի մրցումը, թրուայէն Նեվէր (196,5 քմ.):

ՏԵՐԸԼ ԱՐՄՍԹՐՈՆԿ ՈՉ ՄԱՐԶԱՎ ԱՅՆԵԼ ԸՆԹԱՅՔ Կ ՈՒՆԵՆԱՅ

Օրլանտօ Մէհիբի րոնկ, որ շաբաթասարգիկ Տերը Արմսթրոնկի պէս անախտ էր ընդհանուր դասարան-

րոնկ, որ շաբաթասարգիկ պէս անախտ էր ընդհանուր դասարան-

ցաւ, սակայն հապարտութիւններ տուար փրկակից վարձելով պատարձակուեցաւ: Ան ամբաստանուեցաւ կին ոստիկանի մը հարուածած ըլլալու յանցանքով, գիշերային պրոսպայրի մը մօտ տեղի ունեցած միջադէպի մը ընթացքին: 35 տարեկան Արմսթրոնկ, որ 9 տարի մաս կազմած էր Մէհիբի, անցեալ Յուլիս 1ին դարձաւ ապաւ մարզիկ, երբ Օրլանտոյի կազմին հետ իր պայմանագրութիւնը տարտեցաւ:

ԿԻ ՌՈՒ ՊԻՏԻ ՄՆԱՅ ՕՔՍԵՆԻ ՄԱՐԶԻՉ

Վերթեան մարզիչ Կի Ռու, անցեալ շաբաթվերջին երկարաձգեց Օքսէնի հետ իր պայմանագրութիւնը, յաւելեալ երեք տարուան համար:

64 տարեկան Ռուի պայմանագրութիւնը Օքսէնի հետ տարտեցաւ Ֆրանսայի ֆուտբոլի ասոցիացիէն: Ան 1961էն ի վեր Օքսէնի մարզիչն է:

Ֆրանսայի բաժակին տիրացած Օքսէն, ճիգ պիտի չ'յնայէ իր կազմին ներս պահելու համար ֆրանսացի միջազգային յառաջապահ ձիպրիլ Սիւսէն:

ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՆՈՐ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ՝ 26 ՅՈՒՆԻՍԻՆ

Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնը կը հաղորդէ, թէ 26 Յուլիսի ժամը 6:00ին տեղի պիտի ունենան պասքեթպոլի նոր ֆետերասիոնի ընտրութիւնները՝ Ղազիրի ակումբին մէջ: Եթէ պատահի, որ այդ օրը նոր ֆետերասիոնը չ'ընտրուի, ընտրութիւններու երկրորդ փուլը տեղի պիտի ունենայ 2 Օգոստոսին, նոյն վայրին մէջ եւ միեւնոյն ժամուն:

Ֆետերասիոնը կը յայտնէ, թէ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութիւնը իրաւունք տուած է 152 ակումբներու ընտրութիւններուն մասնակցելու համար:

Իւրաքանչիւր դասակարգի խումբերուն քուէները բաժնուած պիտի ըլլան հետեւեալ ձևով:

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ - իւրաքանչիւր քուէ համագործակցութիւն:

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ - իւրաքանչիւր քուէ համագործակցութիւն:

Գ. ԴԱՍԱԿԱՐԳ - իւրաքանչիւր քուէ համագործակցութիւն:

Դ. ԴԱՍԱԿԱՐԳ - իւրաքանչիւր քուէ համագործակցութիւն:

Ֆետերասիոնի ընտրութիւններուն թեկնածուները կ'այցող անձերուն համար պայմանաւորաբար ճշդուած է 12էն 19 Յուլիս: Անոնք Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնին կեդրոնատեղիին մէջ իրենց թեկնածուութիւնը կ'ընեն զինչ այդ ժամանակամիջոցին, առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00:


Իր Բողոքին, ֆետերասիոնը յայտնեց նաեւ, թէ ներում կը շնորհէ բոլոր այն պատասխանատուներուն, որոնք նախապէս տարբեր պատճառներով կ'ախակայւած էին:

Նշենք, թէ այժմու ֆետերասիոնի 13 անդամները հետեւեալներն են:

Նախագահ՝ Ժան Համմաժ
Փոխնախագահներ՝ Ղասսան Ֆարէս, Մոհամէտ Տիպ եւ Ժաւուհար Շաքէր
Քարտուղար՝ Ռոպէր Ապի Ապտալլա
Գանձապահ՝ Վիլիզ Չէրչեան
Հաշուապահ՝ Էնէսթ Եիտիպ
Ազգային խումբերու տնօրէն՝ Ժան Մամօ
Անդամներ՝ Ֆուատ Նաամէ, Ժան Թապէթ, Ուալիտ Քրիտի, Միշէլ Մաննուս եւ Նաաթր Պասմէ (այս վերջինը՝ հրաժարած):

ՀԵՐԻ ՔԻՐԸ ՄԻԱՅԱԻ ԼԻՎԸՐՓՈՒԼԻ

Աւստրալիացի միջազգային յառաջապահ Հէրի Քիւրը երէկ իր ակումբը՝ Լիքը Բըյոյով հինգ տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց Լիվըրպոլի հետ:



Հէրի Քիւր

«ՎՆԱՅ ԶԱՅՆ» «ՎՆԱՅ ԶԱՅՆ» ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՔՈՂ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

«Վանայ Զայն» կարիքը ունի ծանուցումներ հաւաքող ճեղքայանցի երիտասարդութիւնը եւ երիտասարդներու, որոնք պիտի աշխատին շահաբաժինի դրութեամբ: Հայերէնի կողմէ ֆրանսերէն կամ անգլերէն եւ արաբերէն գիտնալը պայման է:

Կը խնդրուի անձամբ ճեղքայանցի «Վանայ Զայն»:

Հ.Մ.Ը.Մ. ԱՅՆՃԱՐԻ ՄԱՄՆԱՃԻՂ ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի վարչութիւնը կը յայտնէ, թէ մասնաճիւղի փողեր ընտրուած են, ղեկավարութեամբ, եղբ. Պարգեւ Թալալեանի, Հինգրաբի, 10 Յուլիսի առաւօտեան կը մեկնի Յորդանան, ընդառաջելով Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մասնաճիւղի հրաւերին, իր մասնակցութիւնը բերելու Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 85ամեակի նուիրուած տօնակատարութեան:

Փողերախումբը Այնճար կը վերադառնայ երկուշաբթի, 14 Յուլիսի երեկոյեան:

Հ.Մ.Ը.Մ. ԱՅՆՃԱՐԻ ՄԱՄՆԱՃԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԻՐԱՆ

ԵՐԵՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՆ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ ՄԸ ՏԱԼԷ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԵՏՔ

Իրանցի երեք ուսանողներ ձերբակալուած են երէկ, մամուլ ասուլիս մը տալէ քանի մը վայրկեան ետք: Անոնք դատապարտած են երկրին վարչակարգը, որ արգիլած է հանդիսութիւններ կատարել՝ ապահովութեան ուժերուն եւ ուսանողներու միջեւ արհմարտի բախումի մը շրջապատ տարեդարձին առիթով:

Զերբակալութիւնները տեղի ունեցած են Միասնականութեան Ամրապնդումի Գրասենեակին կարգ մը անդամներու այն յայտարարութենէն ետք, թէ նախագահ Մոհամէտ խաթեմի ձախողած է բարեկարգումներ ընել եւ թէ ծայրայեղականներու գլխաւորութեամբ արդարադատութեան մարտը կը փորձէ մտքի ապստոխանութիւնը արգիլել:

Գրասենեակը բարեկարգումներու ի նպաստ կողմնորոշուած ուսանողական խմբակ մըն է:

«Նկատի ունենալով, որ մեր կարծիքով խաթեմի բարեկարգումները վերջ գտած են, ուղեցինք նստացոյց մը կազմակերպել ՄԱԿի գրասենեակներուն առջեւ», ըսած է Ռիպա Ամերի-Նասապ, ձերբակալութենէն քանի մը վայրկեան առաջ, սակայն անիկա յետաձգուած է իրենց օրակցող երեսփոխաններու թելադրանքով:

Ան յայտնած է, որ ուսանողները կը պահանջեն Մ. Ա. Գրասենեակին անդամ 8 ուսանողներու ապստարծակալութիւնը (անոնք ձերբակալուած են անցեալ ամիս խոռվութիւններու ընթացքին), «ինչպէս նաեւ անոնք՝ որոնց մասին խօսած ենք Քոֆի Անանի յղուած մեր բաց նամակին մէջ», աւելցուցած է ան:

Երեքշաբթի օր, գրասենեակը ՄԱԿի ընդհանուր քարտուղարին նամակ մը յղած էր՝ դատապարտելով Իրանի պատմութեան մէջ «մութ էջը» եւ «քաղաքական ու ընկերային խտրականութիւն մը», որ ըստ անոր՝ ՄԱԿի քննութեանց պէտք է ենթարկուի:

Ամերի-Նասապ ըսած է նաեւ, որ իր խմբակը Իրանի արդարադատութեան մարտին չի վստահիր, որովհետեւ անիկա «կը փորձէ բնաջնջել անկախ մտածողութեան բոլոր աղբիւրները»:

Երեք ուսանողներու ձերբակալութենէն ետք, մնացեալ ուսանողները ապաստանած են կեդրոնական թեհրանի շէնքին մէջ: Անոնք սակայն ի վերջոյ կրցած են մեկնիլ, ուստիկանութեան կողմէ շէնքին դուրս առաջնորդուելէ ետք:

Թեհրանի համալսարանին մէկ ուսանողը յայտնած է, թէ դէպքը ցուցանիչ է, որ խաթեմի իշխանութիւն չունի այլեւս, հետեւաբար ան այլ ընելիք չունի, բացի հրաժարելէ:

ՆԱԽԱԳԱՀԻ ԵՐԵԿ ՆԱԵՆ ԸՆԶՆՈՒՄ ԿԸ ԲԱՆԵՑՆԷ

Նախագահը երէկ նաեւ ճնշումի տակ կը գտնուէր իր եղբոր՝ Մոհամէտ Ռիպա խաթեմի կողմէ, որ կը գլխաւորէ Իրանի բարեկարգչական գլխաւոր խմբակներուն:

Նախագահին յղուած բաց նամակի մը մէջ, ան գանգատած է, որ նորագոյն խոռվութիւններուն ընթացքին ձերբակալուած կարգ մը անձեր «կանկալածելի» կարգ մը հիմնարկութիւններու կողմէ չարչարանքներու ենթարկուած են:

Իրանեան իշխանութիւնները արգիլած էին 1999ի խոռվութիւնները նշող որեւէ հանդիսութիւն կատարել՝ վարչակարգին դէմ բողոքներու նոր ալիք մը կանխարգիլելու համար:

Իսկ Մ. Ա. Գրասենեակը յայտնած է, որ ուսանող-ուստիկանութիւն բախումներուն Յունիս 9, 1999 տարեդարձը պիտի նշուի Սեպտեմբերին, ակադեմական յառաջիկայ տարուան սկիզբը: 1999ին ձերբակալուած կարգ մը ուսանողներ տակաւին բանտարկուած կը մնան:

«ՀՈՒՍԻ մէջ, շուրջ 40 իրանցի ուսանողներ երէկ թեհրանի կառավարութեան դէմ բողոքի ցոյց կատարած են, 1999ի խոռվութեանց չորրորդ տարեդարձին առիթով:

(ԱՅՓ)

ԻՐԱՆ ՊԱՏՐԱՍՏ ԶԵ ՏԱԿԱԻՆ ԻՐ ԿՈՐԻԶԱՅԻՆ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒՆ ԸՆՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ՄԱԿԻ ԸՏՏ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ



Խաթեմի կ'ընդունի Պարատիին

Իրանի կառավարութիւնը երէկ յայտնած է, թէ ՄԱԿի կորիպային ուժանիթի գործակալութեան տնօրէն Մոհամէտ Պարատիին հետ տակաւին չի կրնար քննարկել կորիպային աւելի խիստ քննութիւններու կայացման հարցը, յայտնելով, որ երկու կողմերը նախ պէտք է «փոխադարձ վստահութիւններ չեն»:

Կորիպային Ուժանիթի Միջազգային Գործակալութեան տնօրէնին «առաւելագոյն թափանցիկութեան» պահանջն էր, իրանցի պաշտօնատարներ թափ տուած են պիջոններու գծով իրենց սեփական պահանջներուն:

Արտաքին գործոց նախարարութեան բանբերը յայտնած է, թէ յաւելեալ փորձագոյն չի մը կ'ընդունին հարցը չէ քննարկուած:

Պարատիին միօրեայ այցելութիւն մը կու տար թեհրան՝ համոզելու համար իրանցի ղեկավարները, որ արտօնեն աւելի խիստ քննութիւններ՝ անմիջապէս եւ առանց նախապայմանի ստորագրելով, վաւերացնելով եւ գործադրելով կորիպային պէնքերու տարածումը արգիլող համաձայնագրի մը յաւելեալ մէկ փորձագոյնը:

Արտաքին գործոց նախարար Բամալխարապի յայտնած է, որ այն տուեալը, թէ Պարատիին թեհրան կ'այցելէ՝ «դրական քայլ մըն է»:

Պարատիին թղթակիցներու յայտնած է, թէ փոխադարձ վստահութեան իրականացման համար, «կենսական է, որ Իրան առաւելագոյն թափանցիկութիւնը ցուցնէ», սակայն ան աւելցուցած է, թէ իր քննարկումները «շինիչ» եղած են եւ «ճիշդ ուղղութեամբ կ'ընթանան»:

Ուաշինկթընի մէջ, Երեքշաբթի օր, ամերիկացի ծերակուտական Սէմ Պրատունպէք յայտնած է, թէ Իրան կրնայ մտաւորապէս երկու տարիէն կորիպային պէնք արտադրել:

Միւս կողմէ, պաշտօնպանութեան նախարար Ալի Շամխանի երէկ պաշտպանած է Իրանի կողմէ միջցամաքամասային հրթիռի մը փորձարկումը, ըսելով, որ բանակը պէտք է ապահովէ, թէ անիկա գործօն է:

Շահապ-3 տիպի հրթիռը 1300 քմ. հասողութիւն մը ունի:

Մահմուտ Տիպա Ահմէտ

ԻՐԱՔԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ



Իրաքի նախկին բարձրաստիճան երեք պաշտօնատարներ, որոնցմէ մէկը կրնայ կապեր ունեցած ըլլալ 11 Սեպտեմբերին առեւտանդուած օդանաւերէն մէկուն օդահէնին՝ Մոհամէտ Աթալի հետ, ձերբակալուած են Իրաքի մէջ, յայտնեցին ամերիկացի պաշտօնատարներ երէկ:



Մահմուտ Տիպա Ահմէտ

Կը զրաւէ 23րդ դիրքը Փենթագոնի պատրաստած ցանկին մէջ: Իսկ երրորդ անձնաւորութիւնն է ներքին գործոց նախկին նախարար Մահմուտ Տիպա Ահմէտ, որ կը զրաւէ 29րդ դիրքը: Ահմէտ եւ Հատի ձերբակալուած էին Երեքշաբթի օր: Ամերիկացի պաշտօնատարներ մերժեցին մանրամասնութիւններ փոխանցել: Ամերիկեան կառավարութեան աղբիւր մը սակայն հաղորդեց, որ Ուաշինկթըն հետաքրքրուած է Անիի հարցաքննութեամբ, որ ենթադրաբար դիւանագէտի իր հանգամանքը կ'օգտագործէր «գաղտնի» գործողութիւններու համար: Ան ենթադրաբար դադարի հանդիպում մը ունեցած է Աթալի հետ, թէեւ այդ գծով անհերքելի փաստեր գոյութիւն չունին:

Միւս կողմէ, ամերիկեան բանակը 400-500 ձեռնառումներ զրաւած է Պաղատի արեւմուտքը: Զեռնառումները կը գտնուէին փոխադրականքի մը մէջ: Զերբակալուած են նաեւ փոխադրականքի մէջ գտնուող չորս իրաքիներ:

ՈՒՐԲԱԹ օրուընէ սկսեալ, Իրաք օրական ուժ միլիոն տակաւ քարիւղ պիտի արտածէ: Քարիւղի նախարարութեան աղբիւրները շայտնեցին սակայն, թէ ո՞ր օտար ընկերութիւնը ապահոված է քարիւղ փոխադրելու «խրդոտ» պայմանագրութիւնը:

Քիիհի ղեկավար ժալալ Թալապանի յայտարարեց, որ Իրաքի մէջ քաղաքացիական պատերազմի մը մտավախութիւնը անտեղի է, հակառակ անոր որ ամերիկեան ու բրիտանական ուժերուն դէմ յարձակումները թափ կը ստանան:

(ԱՅՓ)

ՀԱՐԱԽԱՅԻՆ ՔՈՐԷՍ ՊԱՏՐԱՍՏ Է ԶՕՐԱԿԻԳ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՔՈՐԷԱՅԻ, ԵԹԷ...

Հարաւային Քորէայի նախագահ Ռոհ Մու-Հիուն երէկ յայտնած է, թէ Կորէայի Կիւնգ-Նի Հիւսիսային Քորէայի՝ արդի աշխարհին մաս կազմելու համար, պայմանաւ որ անիկա հրաժարի կորիպային պէնքեր ձեռք ձգելու իր ճիգերէն:

Հարաւային Քորէայի գաղտնի սպասարկութեան պետ Քո Եունկ - Քու աւելի ուշ յայտնած է, թէ Փիոնկեանկ 70 փորձարկումներ կատարած է՝ կորիպային պէնքերու մշակումին կապուած:

Ռոհ Վգուշացուցած է Հիւսիսային Քորէան, թէ կորիպային անոր փառասիրութիւնները կը վտանգեն հիւսիսարեւելեան Ասիոյ ապագան:

Հարաւային Քորէա եւ Չինաստան երեքշաբթի գիշեր յայտնած էին, թէ կորիպային պէնքերը վերջ եւ կայուն քորէական թերակղզին կենսական է Հիւսիսային Քորէայի ապագայ բարգաւաճումին համար:

(ԱՅՓ)

Advertisement for VALSE International Cosmetics. The ad features a woman's face on the left and a collection of cosmetic products (lipsticks, foundations, etc.) on the right. Text includes 'VALSE International Cosmetics' and contact information for Armenia and Lebanon.

Advertisement for FUEL CARD. The ad features a large image of an IGOL fuel nozzle and a FUEL CARD. Text includes 'FUEL CARDի Դպրոցական Ֆոնտը 2002-2003 տարեշրջանի' and 'Կրթանպաստ տրամադրուած է մեծ թիւով հայ աշակերտներու Գործացեցէք FUEL CARDը եւ ձեր ներդրումը բերած կ'ըլլաք տնտեսական օգտաշատ ծրագիրներու իրականացման:'. It lists various banks and companies that accept the card.